գնումների համակարգում և ուղարկվել է Հայցվորի էլեկտրոնային փոստին (հիմք՝ կայքից և էլեկտրոնային փոստից արտատպումները)։

–

6. Դատական ծախսեր.

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից։

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում։

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը։»։

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջեւ բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն։

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին,

Դատարանն արձանագրում է, որ հայցի մերժմամբ պայմանավորված դատական ծախսերը պետք է կրի Հայցվոր կողմը և հաշվի առնելով պետական տուրքի վճարված լինելը, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված։

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցը մերժել։

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված։

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակելու պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում։

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am